



# Ա Ր Ա Ր Ա Տ

ՅԻՒ Գ. — ՇՐՋԱՆ ԻԳ.

1891

ՏԱՐԻ ԻՒ. ԱՂՐԻԼ

## ԿՐՕՆԱԿԱՆ

### Ն Ա Ի Ա Ն Չ

Հանգիստ սիրար մարմնին կեանք է, բայց նախանձն սպառնալիքն փառ-  
թիւն է (Առակ. Սոգոմ. 14. 30).

Մարդասէր Հրեշտակ, Աստուծոյ սուրբ խաղաղութիւն, երկնքի  
ճառագայթազգեստ լուսովդ իջի՛ր երկրիս վրայ, մեր մէջ ման եկ  
ու լուսաւորի՛ր, և եղբայր մարդոց մէջ եղամ ամեն տեսակ նա-  
խանձն ոչնչացո՛ւր:

Եթէ որ մի Հին երանի տալու բաղդաւոր տուն հակում է՝ գէպի

անբաղդութիւն այն պատճառով, որ այն տանն սկսել է թագաւորել կասկածանքը, չկամութիւնը, կռիւր, հակառակութիւնն ու անմիաբանութիւնը, քանի որ իսկ ժամանակն է, հալածի՛ր այն տանից չար ոգին արմաւենոյ ոստովդ:

Եւ ուր որ մի մարդ չի ուզում՝ ու նեղանում է իւր նման մարդու բաղդաւորութեան վրայ, ձայնդ հանի՛ր ու ասա՛ նորան հեզարար-խաղաղութիւն գայ վերագ, մինչև որ սիրտը հանդարտի ու քո խօսքդ լսի:

Ճշմարիտ է, որ մեր կեանքի յարաբերութիւնների ու հանգամանքների մէջ ամենից ատելի ու զգուելի մարդը նախանձոտն է: Բայց ամեն մի մարդ, որ նախանձոտ մարդուն պախարակում է, ինքն էլ արդեօք հեռու է միշտ չկամութեան մոլութիւնից: Ձեռքդ սրտիդ վրայ դի՛ր ու ինքդ քեզ հարցու՛ր թէ՛ ի՛նչպէս զգացիր քեզ, գոհ և ուրախ եղա՞ր, երբ որ իմացար, որ քո այս կամ այն ծանօթիդ մի մեծ բաղդաւորութիւն է հասել, որ դու չունիս. երբ որ այս՝ այն մարդուն, որ արժանաւորութիւններ ունենալու կողմից քեզանից շատ ստոր էր, առաջ քաշեցին՝ ու քեզ յետ քցեցին. երբ որ այս այն մարդն՝ իւր ունեցած աշխատութիւններովն՝ աւելի հաւանութիւն գտաւ և աւելի գնահատուեց, քան թէ դու ամեն քո արդիւնաւոր գործքովդ: — Այսպիսի՝ ուրիշների համար միայն յաջող՝ իսկ քեզ համար անյաջող հանգամանքների մէջ ի՛նչպէս էիր զգում քեզ, սիրտդ հանգիստ էր, անվրդո՞վ էիր և ամենևին չէ՛իր նեղանում:

Շատ էլ կուզէիր, բայց մի՛ աշխատիր ուրանալու, որ դու էլ նախանձի այդ ամենատեղի զգացմունքից երբ և իցէ չարչարուած ես եղել: Միտքդ է՝ ի՛նչպէս սիրտդ չէր վեր առնում, չէր տանում, երբ որ դու երբեմն այնպիսի մարդոց էիր լիութեան և հարստութեան մէջ տեսնում, որոնք որ քո կարծիքովդ արժանի չէին — կամ թէ այն փառքի ու պատուի մէջ էիր տեսնում, որին քո կարծիքովդ դու աւելի անհերքելի իրաւունք ունէիր հասած լինելու. — կամ թէ երբ որ տեսնում էիր, որ ուրիշներն իրանց արհեստի, առու-

տուրի և քաղաքացիական յարաբերութիւնների մէջ քեզանից շատ աւելի յառաջացան:

Կարծիք չկայ, որ այդպիսի հարցումներն այս՝ այն մարդու սրտին շատ ծանր պէտք է դան. կգտնուի նրանց մէջ այնպիսին էլ, որ իրան արդարացնելու համար կասէր թէ՛ անշուշտ չվիրաւորուել չէր կարելի, երբ որ տեսնում էի, որ այս՝ այն բանի մէջ ուրիշներին աւելի յաջողում էր՝ քան թէ ինձ, բայց ես մարդոց այնչափ չէի նախանձում, որչափ որ ինքս ինձ վրայ էի ցաւում: Կամ թէ՛ չկամութիւն չունէի. կուզէի, որ ուրիշները բաղդաւոր լինէին. բայց միթէ՛ սրբտիս ցաւ չպիտի տար, երբ որ միշտ ես պիտի մնայի յետ ընկած և ամտես եղած: Կամ թէ՛ ես ընդդէմ չէի՝ և ինձ այնքան չէր նեղացնում ուրիշների բարձրանալն, որքան որ՝ նրանց՝ բարձր զիրքի հասնելուց յետոյ՝ ուրիշների վրայ արհամարհանքով բարձրից մտիկ տալն:

Ա՛խ, այդ լեզուն, որ սովորաբար բանեցնում են ի զուր տեղն իրանց արդարացնելու համար՝ ոչ թէ իրանց արդարացնում է, այլ աւելի պարզ ցոյց է տալի միայն իրանց սրտի նախանձն: Այդ տեսակ խօսքերից յայտնի երևում է միայն իրանց դժգոհութիւնը՝ թէ ինչո՞ւ ուրիշներն իրանցից լաւ են՝ կամ լաւ վիճակի մէջ են, և ամենեին ցոյց չէ տալի՝ Յիսուսի պատուիրածի նման՝ իրանց մարդասիրական զգացմանց անպղտոր ուրախութիւնն՝ իրանց նման մարդոց վայելած բարեաց ու բաղդաւորութեան վրայ:

Միայն մեր հասկացողութեան ու դատողութեան սահմանափակ լինելը կարող է մեզ այդպիսի անմիտ ծայրայեղութիւնների տանել: Նախանձոտ մարդու սիրտը չի վեր առնում, որ ուրիշն այն ունենայ, ինչ որ ինքը չունի, առանց մտածելու, որ այդ բարիքն, եթէ ինքն ունենար, կարելի է իրան ու իւր տանեցոց կկորցնէր. չմտածելով թէ՛ ամենայն բան, ինչ որ մեզ վիճակուում է, աստուածային նախախնամութեան գործն ու տուրքն է, աստուածային նախախնամութեան, որ մահկանացու մարդոց մէջ գտնուած շատ իմաստունիցն էլ լաւ գիտէ թէ՛ ամեն մի մարդու ինչն է օգտակար: Զկամ մարդն՝ իւր ամեն մի տրտունջ ու դժգոհութիւն յայտնող հառաչանքով՝ Աստուծոյ խորհուրդն ու կարգաւորութիւնն է պախա-

րակում, իբր թէ ինքն ամեն բան ուրիշ կերպ կանէր, ուրիշ կերպ կբաժանէր ու կտար մարդոց, ինչ որ իրանց պէտք է, քան թէ իւր Ստեղծողն. էլ չգիտէ որ, իւր անարդար կրքերին ծառայ կշինէր ամենաարդարին էլ: Ի՞նչ անուն տամ մահկանացու մարդոց իրանց գլխումը դրած անմիտ մտածմունքին՝ կամ թէ իրանց բերնից հանած ատեղցփեղ խօսքերին, որ իրանց խելքը տեղը չլինելն է ցոյց տալիս, որովհետեւ այնպիսի մի գժութիւն է վրանները գալիս, որ հեռու չէ աշխարհիս վրայ իշխող վերին Տեսչութեան դէմ ապրտամբուելուց, կամ աստուածային նախաինամութիւնից տրտնջելուց: Մի՞թէ կարող էի խելօքութիւն անուանել: Ա՛չ, այդ մի մեծ թուլութիւն է մարդուս կողմից, այդ՝ խելքի հիւանդութիւն է:

Նախանձոտն կարճամիտ է կեանքի հանգամանքները կշռելու ժամանակը: Նա որ իրան դեռ լաւ չի ճանաչում, համարձակում է ուրիշների արած ծառայութիւնները՝ կամ նրանց ունեցած արժանաւորութիւններն ուրանալ, վատաբանելով: Շատ կարելի է, որ քեզ նման մարդն, որի բաղդաւորութիւնը քո աչքդ չի վեր առնում, շատ կարելի է, ասում եմ, որ պակասութիւններ ունի, հենց մեծ պակասութիւններ — բայց կարող ես նորա առաքինութիւններն էլ ուրանալ: Կարելի է, որ դու նորա լաւ յատկութիւնները չգիտես. բայց շատ ճիշդ կերպով քննել ես, ինչպէս որ քննում ես և ասում նորա պախարակելի կողմերը: Շատ կարելի է, որ Աստուծոյ աչքում նորա լաւ կողմերն՝ իւր ունեցած պակասութիւններից աւելի ծանր են կշռում: Ի՞նչպէս ես քեզ իրաւունք համարում նրան այդպէս խիստ կերպով դատելու: Գիտե՞ս, ի՞նչ տեղը կրնկնէիր դու ինքդ, եթէ որ քեզ էլ այդպէս խիստ կերպով դատէին: Արդէն մի անառաքինութիւն, ուզում եմ ասել, մի պարսաւելի պակասութիւն, որ քո մէջդ տեսնում եմ, քեզ աւելի վատ մարդ է ցոյց տալի քան թէ քո հակառակորդիդ, և այս պախարակելի թերութիւնդ — «*նախանձն*» է:

Կարելի է զուր տեղը չէ, որ սիրտդ չի վեր առնում, աչքդ չի ուզում տեսնել նորա բաղդաւորութիւնն, ինչու որ տեսնում ես թէ՛ թոյլ, թեթեամիտ ու սնապարծ մի մարդ է, և ուզում է, որ քեզանից բարձր լինի: Բայց ի՞նչ աչքով մտիկ կտայիր նրա վրայ,

կամ ի՞նչպէս կվարուէիր Հետն, երբ որ բարեպատեհ զիպուածով ձեր գերերը փոխուէին՝ բազդաւորութեան դու հասած լինէիր, անբազդ՝ նա լինէր. եթէ որ դու յանկարծ պատուի ու հարստութեան կողմից նրանից գերազանց լինէիր՝ ու նա խեղճ վիճակի մէջ լինէր՝ ու վիզը ծռած առաջդ կանգնէր ու քեզանից կախում ունենար: Նրա հետ համեօտ կերպով կվարուէիր, խստապահանջ չէիր լինիլ, պատրաստակազմ մի մարդ կլինէիր նրա համար, խղճալով նրա վատ վիճակին, որի մէջ գտնուում է: Քո նրանից գերազանց լինելդ՝ բերանիցդ հանած մի խօսքովդ անգամ չէիր ցոյց տալ, զգալ տալու համար, որ դու ի՞նչքան առաջ ես գնացել՝ ու նա ի՞նչքան յետ ընկել՝ և ողորմելի դրութեան մէջ է գտնուում: — Ուղիղն ասան, մի թաղցնիլ, որ կարելի է դու աւելի անարգ կերպով կվարուէիր նրա հետ, քան թէ այժմ նա քեզ հետ վարում է խոստովանուիլ, որ եթէ նա իւր բազդաւորութեանն արժանի չէ, դու աւելի ևս անարժան ես քո՝ բազդաւորութեանդ, որի մէջն ես այժմ:

Յիրաւի խելօք բան չէ, որ մարդուս սիրտը չի վեր առնում ուրիշների բազդաւորութեան բարիքն, որոց իսկական արժէքը հենց մեզ էլ անյայտ է: Բազդաւորութեան բարիքը միջոց են միայն բազդաւորութեան հասնելու, բայց երբէք իսկական բազդաւորութիւն չէ կարելի համարել: Մեր՝ սրտով գոհ լինելն՝ ոչ մեր ունեցած կացութիւնից ու աստիճանից կախումն ունի, և ոչ էլ մեր կայքից ու հարստութիւնից միայն: Աշխարհիս բանին լաւ մտիկ տուր ու քննիր, տեղեկութիւններ հաւաքիր եղած փորձառութիւններից, և դու մահկանացու մարդոց այնպէս անհաւասար կերպով բաժանուած բարիքների իսկական արժէքի վրայ բոլորովին ուրիշ՝ բայց աւելի ուղիղ գաղափար կստանաս: Դու պատուական մարդիկ կտեսնես, որ իրանց հարստութեան ու լիութեան մէջ՝ աւելի պարզ կերպով են ապրում, պակաս հագնուում և ուտում, խմում, քան թէ մի ուրիշն, որ նրանցից օգնութիւն է ստանում ապրելու համար: Ուրեմն նրանք իրանց հարստութեան մէջ, երևում է, որ ուրիշ բարիք էլ պէտք է ճանաչած լինին, քան թէ փարթամ հագուստները, համով, հոտով պատրաստուած ընտիր կերակուրները, տան կահ

կարասիքի զարդարանքը՝ կամ փառաւոր բնակարան ունենալն: Եւ որն է այս բարիքն: Ա՛յն, ինչ որ դու առանց Հարստութեան էլ կարող ես ունենալ, որ է՝ մի իմաստուն, ազնիւ և անբա՛ւտ սիրտ:— Յետոյ՝ մարդիկ էլ կտեսնես, որոնք որ ոսկով լցուած են, մտքներից անց կացած, կամ սրտներն ուզած ամեն բանին էլ կարող են Հասնել, բայց և այնպէս անբաղդ կեանք են անց կացնում. ո՛չ իրանք իրանցից են գոհ, ոչ էլ աշխարհիցս: Ահա քեզ ապացոյց, որ նրանց ունեցած դրամական միջոցներն, որոնց Համար որ դու նրանց նախանձում ես, չեն կարող նրանց տալ այն, ինչ որ դու առանց փողի և առանց ամեն բանով լցուած լինելու էլ ստանալ և ունենալ կարող ես՝ — «բո՛ւ իսաղաղութիւնն եմ ասում», որ կարող ես ունենալ, եթէ ամեն բան էլ մտածող մարդ լինիս: Դու շատ պատուական մարդիկ էլ կճանաչես, որոնք որ շատ բարձր աստիճանների տէր են՝ ու շատ լաւ էլ ապրում են, կեանքի ոչ մի պակասութիւն չունին. բայց և այնպէս իրանցից շատ փոքր մարդկանց հետ մարդասիրաբար ու քաղցր կերպով են վարում՝ միանգամայն և ներողամտութեամբ ու զիջողաբար, քան թէ դու քո ստորադրեալների կամ քո ձեռքի տակն եղածների հետ, որոնք որ քեզանից կախում ունին և քեզ իրանց մեծն են ճանաչում. կճանաչես այնպիսի մարդիկ էլ, որոնք որ ամեն տեղ և ամեն կողմից անուանի են ու պատիւ ունին. բայց պտուում են այնպիսի տեղ, որ մի կողմ քաշուեն ու միայնութեան մէջ իրանց օրերն անց կացնեն, և իրանց Համար Համեստ ու Հանգիստ կեանքը՝ հրապարակական պատիւներ ստանալուց շատ աւելի լաւ են Համարում: Բայց ուրիշ մահկանացու մարդիկ էլ կգտնես, որ իշխանութեան գազաթնակէտին են Հասել, և՛ աչքածակների նման՝ տանջւում են, որ ինչքան կարելի է, աւելի և աւելի ոյժ ուրիշների ձեռքից առնեն՝ և իրանք ունենան, որոնք որ իրանք իրանց ճանաչեցնելու և իրանց ուզածն անելու Համար՝ պատրաստ են միլիոններով մարդ փչացնեն, մինչև որ իրանցից տանջուած մարդոց անէժքի տակ չորանան, փչանան:

Լաւ մտիկ տուր աշխարհիս վրայ, այ՛ն չկամ մարդ, և դու ինքդ քեզնից կամաչես, որովհետեւ չհասկացածդ կհասկանաս, որ դու երկրաւոր բաղդաւորութեան բարիք ասուած բաները շատ մեծ

ու շատ բարձր բան էիր համարել, և ուրիշներին նախանձում էիր իրանց ունեցած առաւելութիւնների համար, որ, եթէ իսկը նայես, ո՛չ արհամարհել կարժեն, ոչ էլ չափից դուրս ցանկանալ. աւելի լաւն ասեմ. կեանքի ամեն առաւելութիւններն այն ժամանակ են միայն իրանց իսկական արժէքն ունենում, երբոր մարդս իւր տեղը բանեցնելը գիտէ: Եթէ որ Աստուած քեզ ըստ երեւութին փոքր վիճակ է տուել՝ կամ քեզ այնպէս է երեւում, որ աշխարհիս բարիքից քեզ փոքրիկ մի մասն է հանել ու բաժին տուել, ուրեմն ճշմարիտ քրիստոնէի պէս տնտեսաբար բանեցուր այն փոքրն, որի վրայ դրել է քեզ: Այն միջոցներն, որ մեր Ատեղծողն աշխարհիս վրայ սփռում է, որպէս զի մեր բարօրութիւնն յառաջացնի, անտարակոյս տեսակ տեսակ փայլ ունին. բայց թէ՛ ամենափոքրիկն և թէ՛ ամենամեծն, ըստ երեւութին ամենավատն՝ որպէս և ըստ երեւութին ամենափառաւորը միակերպ լաւ են՝ մեծ նպատակի հասնելու համար:

Բայց նախանձի իսկական աղբիւրն՝ աւելի շատ անգամ մարդուս փշայտ է իրոն է: Եւ ի՞նչպէս կարելի է հաւատալ, որ Յիսուսի մաքուր սիրտն ունենայ նախանձտան իւր անսիրելութիւնովը՝ սիրտը չի վեր առնում, որ ուրիշներն ունենան այն, ինչ որ իրանց առաքինութիւնն, իրանց աշխատասիրութիւնն է տուել իրանց, կամ նախախնամութիւնն: Ի՞նչպէս կարելի է հաւատալ, որ նա ազնիւ սիրտ ունենայ, երբոր կարող է ուրիշներին նախանձել իրանց ունեցած այնպիսի բաների համար, որ տեսակ տեսակ հնարքներ բանեցնելով ու ծուռ և անվայել ճանապարհով են կարողացել ձեռքները քցել: Ո՞վ կցանկանար այդպիսի զզուելի գնով ձեռք բերածին, որի ունեցողները միայն՝ առանց ամաչելու՝ իրանց համար բազդաւորութիւն են համարում, որ փողի, կայքի տէր են, կարծելով թէ երկրաւոր բազդաւորութեան իսկական բարիքի տէր են դարձել. — ո՞վ կցանկանար, ասում եմ, նրանց ունեցածի վրայ աչք ունենալ, կամ նրանց ընկեր դառնալ ու բաժին ունենալ նրանց կարծած բազդաւորութիւնից: Այդպիսի մի բան կարող էր ցանկանալ նա՛, ով որ նրանց պէս անարգ կերպով է մտածում:

Չուր տեղը չէ՛, որ մենք փախչում ենք Աստուծոյ և հենց ինքն

իւր աչքից ընկած մարդուց, ինչու որ նրա շարժմունքի մէջ չկամու-  
թեան նշաններ ու հետքեր ենք տեսնում — մենք հասկանում ենք,  
որ նորա սիրտը դժոխք է, որովհետեւ մէջը մըրիկի նման սաստիկ  
կատաղութիւն կայ, որից տանջւում է թէպէտ և ծածկում է մեզա-  
նից: Զուր տեղը չէ՛, որ այդպիսի մարդու հետ սերտ յարաբերութիւն  
ունենալուց խորշում ենք, ինչու որ վախենալու տեղ ունինք, ու ամեն  
բոպէ արած գանդատներովը մեզ կձանձրացնի. ուրիշներ ի վրայ արած  
գրպարտութիւններովը հոգիներս բերաններս կբերի, իւր սրտի ան-  
հանգստութիւնովն ու թափած մաղձովը մեզ կթունաւորի: Այո՛,  
նախանձոտ մարդու սիրտը կատարեալ դժոխք է, որ մեզանից միայն  
ուզում է ծածկել. նրա դժգոյն, սաստիկ դժգոհութիւն արտայայ-  
տող երեսը, նրա տխուր՝ թունաւորող նայուածքը, նրա անհաս-  
տատ և անդադար փոխուող տրամադրութիւնը ցոյց են տալի նո-  
րա սրտի որպիսութիւնը: Նրա մէջ բնակւում է ամենահասարակ  
հպարտութիւն, որ իսկական մի արժէք չունի. նրա մէջը կայ իրան  
չարչարող այն զգացմունքը թէ ինքը մի մարդ չէ՛՝ ու մի լաւ բան ա-  
նել ձեռքիցը չի գալի. նրա մէջը կայ ստոր ընչասիրութիւն, գրպար-  
տելու կատաղութիւն, միշտ իւր սիրտն այրող այն անձնասիրութիւ-  
նըն, որ իրանից ջոկ աշխարհումս ո՛չ մի բան չի ուզում ճանաչել:

«Բարի սիրտն», ասում է Սողոմոն իմաստուն թագաւորն, «մար-  
մնի կեանքն է, բայց նախանձն ոսկորներին փթութիւն է»:

Նախանձը, շատ մեղքերի պտուղը, միշտ էլի ծնում է նոր աւեր-  
ինչու որ փչացնում է մեր հոգին՝ և ամեն բարի, մեծ ու ազնիւ  
բանի անընդունակ և անյարմար է դարձնում: Նա հակառակում  
է, առանց իմանալու, Աստուծոյ Նախախնամութեան հետ, որ բա-  
րին բաժանում է այս աշխարհումս իւր իմաստութեան համեմատ՝  
ո՛ւմ ո՛րչափ որ հարկաւոր է համարում, և հակառակում է մար-  
դոց հետ, որչափ էլ մեղաւոր չլինէին. իւր աչքումը նրանց ունեցած  
բաղդաւորութիւնը՝ մի մեծ յանցանք ու մի չարագործութիւն է:  
Հակառակում է, կուռում է ինքն իրան հետ, ինքն իրան ուտում.  
Նախանձը մինչև անգամ մարդուս կերպարանքն էլ է փոխում,  
մարմնի առողջութիւնը խանգարում, նրա շրթունքի վրայ չարա-  
խօսութեան ու գրպարտութեան խարան դնում. և աչքի նայուած-

քի մէջն՝ ընչաքաղցութիւն: Այն ուր որ նախանձ ու կռիւ կայ, այնտեղ է անկարգութիւնն ու ամեն չար բաները» (Յակ. 3, 16):

Ինչպէս որ ամեն մի մոլութիւն, այնպէս էլ նախանձն իւր նշանները ցոյց է տալի: Թշուառ նախանձոտի սրտի մէջ բնակուած չկամութիւնն իւր երեսիցն էլ յայտնի երևում է: Այ թշուառական, ի՞նչու ես գանգատում մարդոց անսիրութիւնից: Ի՞նչու ամեն տեղ նիւթ ես գտնում չար մտքի գնալու, կամ քեզ համար վատ կասկածներ անելու ուրիշների կողմից: Ինչու ես քեզ հետ մօտիկ կամ հեռու յարաբերութիւն ունեցողներին բոլորին էլ զրպարտում, մեղադրելով թէ՛ ատելի թշնամի են քեզ: Ամեն տեղ քեզ չարակամներ, թշնամիներ ես տեսնում՝ քո չար սրտիցդ խանգարուած եր՛ւակայութիւնովդ. չարաչար սխալում ես. միայն ինքդ ես քո չարակամդ, ինքդ ես քո թշնամիդ, ուրիշ ոչ ոք չկայ. ինքդ փոխուի՛ր, քեզ վրայ այնքան ոյժ ունեցիր, որ ինքդ քեզ յալթես, չար մտքերդ ու կասկածներդ մտքիցդ հանես, դէն քցես, ու կզարմանաս, տեսնելով, որ բոլոր աշխարհը փոխուել է:

Իրան է, չինք կարող ասել թէ՛ նախանձելու հակումն, երբոր մի անգամ մի մարդու սրտի մէջ խոր արմատ է քցել, հեշտ է ոչնչացրելն: Իսայ Լուսոս-Յոյ օգն-Նի-նոյն ու մի Բարի Բան անկարելի չէ անելն, երբոր մարդս լուսով ու հասարակ կերպով մարտնչելու համար է անհեռու Բարի Բանն: Արա՛ համար պէտք է, որ մարդս հենց որ իւր սրտումը չկամութեան մի թեթեւ շարժում տեսաւ, ամենայն կերպով աշխատի իւր սրտումը մեռցնելու—այն ժամանակ աւելի ապահով կերպով կմնայ իւր սրտի մաքրութիւնն, միամտութիւնն ու հանգստութիւնն, ուրախ տրամադրութեան հետ միասին:

Աւզում ես քեզ ազատ պահել նախանձի ատելի անառաքինութիւնից, սորվեց՛ուր քեզ շատ բարձր գաղափար չունենալ արտաքին բաղդաւորութեան բարիքի վրայ, որ շատ մեծ բանի տեղ չդնես. այլ լա՛ւ հասկացիր ու խոր ազդեցութիւն թող անի քո սրտիդ վրայ այն ճշմարիտ խօսքը թէ՛ Բարի Բանի անհաղթ Լուսոս-Յոյ խօսքն ու իրօք մարդս ու արտաքին Բարի Բանից ու մի Բարի Բան անկարելի չէ կարող նրան Բարի Բանն անել. նոյնպէս սրտումդ թող տպուի այն խօսքի ճշմարտութիւնը թէ՛ ինչ որ Լուսոս-Յոյ խօսքն անհաղթ չէ կարող չելու որ ուր, թէ՛ շատ էլ է պէ-

—էց ընկել ես: որ ունենաս: լաւ իմացիր, որ անկասկած չէլ համար լաւ-  
ասկանք է:

Եթէ որ մտքիցդ անգամ անցկացնէիր թէ՛ այդպէս չէ, կասկած տանելով իմ ասածիս վրայ, այն ժամանակ լաւ իմացիր, որ կասկածելովդ չես հաւատում հենց Աստուծոյ խօսքի ճշմարտութեանն էլ, որ մեզ յայտնել է թէ՛ մեր երկնաւոր Հայրն աւելի լաւ գիտէ թէ՛ ինչն է պէտք քեզ և ամեն մէկիս (Ղուկ. 12, 30)։ Թէ Աստուած սիրողներին համար ամեն բանն էլ ամենից լաւն է: Ել ասեմ, եթէ որ դու կասկած ես տանում, ուրեմն չես հաւատում յաւիտենական Տիրոջդ ողորմածութեան, աշխարհս կառավարող Նորա նախախնամութեանն, որ հոգ էր տանում քեզ՝ դեռ ևս դու աշխարհ չծնած: Դու քո տկար ու սխալական խելքդ աւելի բարձր ես համարում Աստուծոյ ամենիմաստ իմաստութիւնից, որ աներևոյթ ոչնչութիւնից բոլոր աշխարհս ստեղծել է՝ կեանք ու երջանկութիւն վայելելու համար: Առանց Աստուծոյ և Նորա նախախնամութեան հաւատալու՝ և քրիստոնէական հաստատ հաւատ և աներկբայ յոյս ունենալու՝ դու ընկնում ես երեւակայական անմխիթար ճակատագրական մի ողորմելի դրութեան հակասութիւնների մէջ՝ ու մեռնում ես յուսահատութեան մէջ:

Իսկ եթէ Յիսուսի մեզ սորվեցրած կրօնի այն յաւիտենական ճշմարտութիւնների մէջ համոզուած իս ու հաստատ կերպով հաւատում ես Նորա անանցանելի խօսքերին, ուրեմն քո ունեցած հաստատ համոզմունքներիդ հետ ի՛նչպէս կարելի է համաձայնեցնել այն քո պախարակելի զգացմունքդ, որ սիրտդ չի վեր առնում, երբոր քեզանից աւելի արժանաւոր մարդիկ ես տեսնում քեզանից աւելի բազումը վիճակի մէջ: Ինչու աչքդ պէտք է չվեր առնի, որ քեզ նման մարդիկն այն բարիքն ունենան, որ երկնաւոր Հայրդ թոյլ է տալիս նրանց ունենալու: Նա՛ է նրանց պարգևել՝ ու նա՛ է, որ քեզ չի տուել իւր խորհրդովն, որի իմաստութեանն ոչ մի հողեղէն մարդ խելք հասցնել ամենեւին չի կարող. մեզ կվայելի միայն խոնարհութեամբ ու հնազանդութեամբ հպատակել Աստուծոյ անքննելի խորհրդին: Պէտք չէ անխելքութիւնով հակառակ գնանք Նորա կամքին: Ենորհակալութեամբ ունեցիր ու բանեցուր, ինչ որ քո երկնաւոր

Հայրդ պարզեցել է, և իմացի՛ր Հաւատարմութեամբ գործ անել: Կգայ ժամանակն, որ դու Հաշիւ ու Համար պէտք է տաս թէ՛ քեզ իւր տուածն ի՞նչպէս ես բանեցրել:

Եթէ ուզում ես նախանձելուց ազատ ու հեռու պահել քեզ, պէտք է էլի բրիտոնեական իմաստութեան անվրդով ու պարզ սիրտն ունենաս, որ ասում է թէ՛ «ստեղծութեան հարցում, ինչպէ՛ր, հաստատանքի մէջ ամենալուսն է դեր, «ստեղծութեան հաստատման հարցումը ես ան արհեստական հարցումը մարդու պատրաստութեամբ»:

Քո ընտանեկան կեանքիդ մէջ ու քո քաղաքակիցներդ ամեն մէկի հետ արդար և իրաւացի կերպով վարուի՛ր, և ամենն էլ սրտով քեզ մօտիկ կլինին ու կհամակրեն քեզ: Իսկ եթէ բաւական մեծ հոգի ու քաջ սիրտ չունիս, որ քո ունեցած գիրքդ ու վիճակդ օգտակար կերպով բանեցնես քեզ նման մարդոց բազմաւորութեան ու քո կեանքդ խաղաղ կերպով անցկացնելու համար, իմացի՛ր, որ աւելի մեծ շրջաններում աւելի քիչ օգուտ կբերես քո կատարած գործովդ:

Այնպիսի շատ գոված ընտանիք եմ ճանաչում, որի անց կացրած կեանքը մի ժամանակ փափագելի էր շատերի համար, բայց տարիներ ընթացքումն այդ գերդաստանի տուն ու տեղը թշուառութեան բնակարան դարձաւ, և իրանց հարեանները խելք չկարողացան հասցնել նրանց զրութեան բոլորովին դէպի վատը փոխուելուն: Այնպէս էր երևում, որ կարծես թէ՛ այդ գերդաստանի բոլոր արտաքին հանգամանքները նոյնն էին մնացել, բան չէր փոխուել. կարծես թէ՛ այդ տունն անկարօտ կեանք էր անց կացնում, ապրուստի ոչ մի նեղութիւն չէր քաշում, կարծես թէ՛ ինչ բանի էլ որ կպչում էին, գործն աջողակ էր գնում ու լաւ շահ էին տեսնում, մարդոց մէջ իրանց ունեցած անունը միշտ կար ու կար, ոչ ոք չէր կարող ասել թէ՛ էլ առաջուայ տունը չեն, առաջուան անունը չունին: Բայց և այնպէս խաղաղութիւն այլ ևս չկար այդ տանը մէջ: Ի՞նչ էր պատահել, ի՞նչպէս էր այդ տունն այդպիսի խղճալի գրութեան հասել: — Ով որ ամեն բան զիտող ու թափանցող աչքով կարող էր այդ տան պատերից ներս մտիկ տալ, իսկոյն կհասկանար թէ՛ բանն ին-

չու՛մն է՝ կհասկանար իսկոյն, որ այդ տանն օձեր են բոյն դրել, որ իրանց թոյնը թափու՛մ էին մէջն ապրողներին բոլորի սրտի մէջ: Նախա՛նջն էր այդ թունաւոր օձն, որ այդ բնտանիքին իւր ունեցած բաղդաւորութիւնից զրկեց, և անբաղդութեան մէջ քցեց: Արդէն երբ որ եղբայրները դեռ փոքրահասակ էին, նրանց միմեանց հետ արած կռիւներից յայտնի տեսնու՛մ էր, որ մէկը միւսին չկամութիւն էր անու՛մ, ու սիրտը չէր վեր առնու՛մ, որ իրանց մէջ մէկն որ և իցէ առաւելութիւն ունենայ՝ տեսնու՛մ էր, որ սիրտները չի վեր առնու՛մ, որ իրանցից մէկին աւելի են գովու՛մ: Իրանց փոքրութիւնից միմեանց լաւութիւնը չուզենալու վրայ շատ տարիներ անց կացան, եղբայրները մեծացան, չափահաս մարդիկ դարձան, դրանցից ամեն մէկն իրան համար ջոկ ջոկ տուն ու տեղի տէր դարձաւ: Բայց տարիների հետ իրանց սրտումն ունեցած չկամութեան սերմն էլ իրանց հետ մեծացաւ, հաստ ու պինդ ծառ դարձաւ: Այ՛ մէկն էլ իւր վիճակից գոհ չէր լինու՛մ, երբ որ տեսնու՛մ էր, որ իւր միւս եղբայրն աւելի օգուտ էր տեսնու՛մ իւր բռնած գործից, կամ թէ աշխարհում իրանից աւելի անուան ու պատուի էր հասնու՛մ իրար հետ կռիւ անելու հակումը դրանց սովորութիւն ու երկրորդ բնութիւն դարձաւ, ու դրանց սրտերն իրարից բոլորովին սառցրեց, բաժանեց, հեռացրեց. այն սրտերն, որ իրար միշտ մօտիկ և ուղիղ պիտի լինէին, իրար հետ կապուած և իրար վրայ պիտի ցաւէին, երբ որ այդպէս միմեանց ոչ թէ մէկ, այլ ջոկ ջոկ արիւնից և իրար օտար ճանաչեցին՝ ու միմեանց յաջողութեան, բաղդաւորութեան վրայ ծուռ աչքով մտիկ տուին՝ իբրև իրանց ատելի թշնամու վերայ, խաղաղութեան և օրհնութեան հրեշտակն էլ այդ անբաղդ տանից դուրս եկաւ ու միմեանց նախանձող եղբայրներից հեռացաւ: Մի ժամանակ շատ լաւ կեանք ունեցող տունն այսօր թէև կայ, բայց մի այնպիսի աւերակ է դարձել, որ տեսնողի սիրտը մորմորու՛մ է:

Քանի ու քանի ժողովուրդ էլ եմ ճանաչու՛մ, որի քաղաքացիքը նոյն տեղի ամենապատուաւորներն էին: Սիրտները իրար հետ մէկ լինելուց, իրար վրայ հաւատարմութիւն ունենալուց, ամենքն էլ միասին՝ մէկի համար էին կանգնու՛մ, մէկն էլ՝ ամենի համար:

պատրաստ լինելով մինչև անգամ իրանց կեանքը չինսայել: Այդ տեղ, ո՛ւր որ գնայիր, ո՛րտեղ էլ մտիկ տայիր, ամեն տեղ և ամենին էլ կտեսնեիր լաւ կեանքի մէջ ու սրտով ուրախ, այնպէս որ՝ ամեն մի օտարական, որ այդ գիւղը, կամ քաղաքն էր գալիս, իւր մտքումը կասէր թէ՛ այստեղ ապրելը լաւ է, այդպիսի տեղ, այդպիսի մարդիկ դժուար թէ՛ շատ գտնեմ: Բայց մի ժամանակից յետոյ մէկ էլ գալիս է նոյն տեղն՝ ու զարմանալով տեսնում է, որ էլ առաջուայ մարդիկը չեն, բոլորովին փոխել են իրանց բնութիւնը, վատացել են: Տեսնում է, որ քաղաքացիք միմեանց վրայ գանգատներ են տալի, իրար դէմ դատ են բաց անում անդադար: Հասարակաց գործերն երեսի վրայ են մնացած, ոչ մի բան գլուխ չի գալի, անհոգութիւնն ու անտարբերութիւնը տիրել է գրեթէ ամենին էլ, մեծ ու պստիկ չկայ, ամօթ, պատիւ ասած բանը վերացել է, իրար չեն հաւանում, միմեանց բամբասում են, իրար վրայ ծուռաչքով են մտիկ տալի, միմեանց լաւը չեն ուզում, այլ ընդհակառակն ուրախ կլինէին իրար անբաղդանալու վրայ, այն պատուական ժողովուրդն, որ առաջ ինչպէս սէր ու միութիւն ունէին իրար մէջ, էլ այն մարդիկը չեն, միմեանց չեն հաւատում, հաւատարմութիւնը կորել է: Ստարականն որպէս և այն տեղի բնակիչներն զարմանալով հարցնում են իրանք իրանց թէ՛ էս ի՞նչպէս եղաւ, որ այդ ժողովուրդն այդպէս փոխուեց, այդչափ վատացաւ, ի՞նչն է ինձ անյայտ պատճառն, որ չեմ կարողանում իմանալ: — Որչափ էլ տխուր լինի այդ հարցումների պատասխանը, բայց և այնպէս պարզ է թէ՛ ի՞նչ որ արաւ, նախանշն արաւ: Ինքնասիրութիւնը ժողովրդի սրտից հանեց առաջուայ սէրն ու միաբանութիւնն, որ կար իրանց մէջ՝ ու տեղը հակառակութիւն սերմանեց իրար դէմ, կուսակցութիւններ էր, որ մին մինի ետեւից դուրս եկան, և միմեանց դէմ առաջ եկած ատելութիւնն այժմ որդոց որդի է գնում:

Ճշմարիտն եմ ասում որ, ոչ մի կրակ, որ մի քաղաքի ամբողջ փողոցների հետքն անգամ չի թողնում, ոչ մի հեղեղ, որ մեծ տեղեր է ամայի անապատ դարձնում, պատերազմի ոչ մի աւերած, որ ամբողջ երկիրներ է փչացնում, հասարակաց այնպիսի մեծ ամբաղ-դութիւն չէ, քան թէ նախանձն, երբ որ իրար հետ կապուած մի

ժողովրդի մէջն ընկնում է ու սաստիկ զօրանում: Նախանձն ոսկորներին փթութիւն է:

Եթէ որ այդպէս է, ուրեմն ամեն մի մարդ, որ իսկապէս Քրիստոսի աշակերտ լինել է ուզում, պէտք է քաջաբար առաջը դուրս գայ այդ մոլութեան, որ մարդոց իրանց ունեցած բազդաւորութիւններից է զրկում, տուներ, գիւղեր, քաղաքներ քանդում, աւերում, ու սիրտը պիտի չհանդարտի, մինչև որ այդ օձի գլուխը չջարդի:

Ես էլ ի՛նչ պիտի անեմ ուրեմն, կամ ի՞նչպէս անեմ, որ մեր մէջ, իմ ընտանիքիս, կամ իմ ժողովրդի մէջ ամեն բան էլի դէպի լաւը փոխուի, չարը խափանուի ու բարին առաջ գայ:

Այդ բանն ամենից առաջ քեզ ու քո սրտիդ հարցնւր. կարողացի՞ր քո մէջդ յաղթել ու խեղդել ամեն մի հակումն, որ քեզ չկամութեան է տանում. ազնիւ եղբայրսիրութեան օրինակ տուր քեզ նրման մարդոց. թէ՛ եղբայրներդ, թէ՛ ընկերներդ և թէ՛ քեզ ծանօթ կամ անծանօթ մարդիկ լինին, նրանց հասնող, օգնող եղի՛ր միշտ, որ տեղ որ ձեռքիցդ գայ. մինչև անգամ ոչ մի գոհաբերութիւն մի խնայիլ, ուր որ դու ուրիշների բազդաւորութիւնն ու բարօրութիւնը պիտի առաջացնել կարողանաս:

Չար օրինակը՝ հենց որ միանգամ տալիս են, շատ անգամ այնպէս է տարածվում, որ բաւական տեղեր չարիք է առաջացնում, բաւական մարդիկ փչացնում. բայց աւելի շատ անգամ պատահում է, որ մի բարի օրինակ աւելի զօրաւոր կերպով է ազդում շատ տեղ և շատ մարդոց վրայ՝ և օրհնաբեր լինում՝ բարին առաջանալու: Ինչ պախարակելի բան, ինչ յանցանք, որ առաջուայ մարդիկ իրանց օրերումն արել են, իրանցից յետոյ աշխարհումս ապրողներին զգուանքին է միայն արժանացել. բայց գեղեցիկ, ազնիւ բանը մնացել է միշտ իբրև սուրբ սերմեր ամեն ժամանակների համար: Յիսուս Քրիստոս բոլորովին աննախանձ և ամենայն ուրախութեամբ զոհուող մարդասիրութեան ամենամեծ օրինակ տալով մեզ, մեր առաջնորդը դարձաւ. Նորա օրհնութիւնը յաւիտեան կմնայ: Դու էլ գնա՛ Նորա՝ ճանապարհովը:

Թարգմ. Գ. Ե. Ա.